դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ պատասխանող «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ բավարարել. «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 04.03.2024 թվականին կնքված թիվ «ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ 24/04» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումը ճանաչել անվավեր:

2. Որպես դատական ծախս «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Ագաստ» ՍՊԸ-ի բռնագանձել՝

2.1. 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար.

2.2. 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Մնացած մասով դատական ծախսի բռնագանձման պահանջը մերժել և դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am